16.06.2021թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ 4-7 ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ 4. «Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում

Առաջարկություն Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ

Համաձայն «Յունիբանկ» ԲԲԸ 29.04.2021թ. Խորհրդի որոշման, Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացվում են Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ,
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին:

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետեր «Uniholding GG Limited» ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական բաժնետոմսերի քանակը՝ 147,805,227 հատ, արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ 32,010,000 հատ)
Էդուարդ Զամանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Հրահատ Արզումանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Դավիթ Փափազյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Վարդան Աթայան՝ Բանկի բաժնետեր (սովորական բաժնետոմսերի քանակը՝ 5,483 հատ)
Արտեմ Կոնստանդյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

ՀԱՐՑ 5. «Յունիբանկ» ԲԲԸ 2020թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում

Առաջարկություն շահույթի բաշխման վերաբերյալ

Հաշվի առնելով «Յունիբանկ» ԲԲԸ 2020թ. ֆինանսական գործունեության արդյունքները՝ Բանկի 29.04.2021թ. Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է.

- սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, Բանկի՝ ըստ ՀՀՄՍ 238.576 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

ՀԱՐՑ 6. «Յունիբանկ» ԲԲԸ 2021թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում

Առաջարկություն Բանկի 2021թ. Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի ընտրության վերաբերյալ

ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ 2021թ. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:
Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից մրցույթը անցկացվել է, և արդյունքներն ամփոփվել են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի և Բանկի ներքին իրավական ակտով սահմանված պահանջներին համապատասխան: 08.04.2021թ. Վարչության որոշմամբ, հիմք ընդունելով մրցութային առաջարկի արդյունքների գնահատումը, հաղթող է ճանաչվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:
«Յունիբանկ» ԲԲԸ 29.04.2021թ. Խորհրդի որոշմամբ, Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն որպես «Յունիբանկ» ԲԲԸ 2021թ. Ֆինանսական գործունեության արտաքին

աուդիտն անցկացնող անձ:

ՀԱՐՑ 7. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերի գնահատում

Վերը նշված ներքին իրավական ակտերն անփոփոխ թողնելու վերաբերյալ առաջարկություն

<<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը հաստատվել են 29.06.2020թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ: Հաշվի առնելով, որ <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքում, ինչպես նաև այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում չեն կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեին նշված իրավական ակտերը խմբագրելու անհրաժեշտության, ի հայտ չեն եկել էական թերություններ և բաղթողումներ, 29.04.2021թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է նշված ներքին իրավական ակտերը թողնել անփոփոխ: